

20.150

329.14

h-24

161 15 JAN 2010  
05 FEB 2007


ՌԱՄԿԱՎԱՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

№ 1

# ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

## ԹԻԻՐՔԱՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

(ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՅ ՍԱՀՄ. ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵԴՐ. ԽՈՐՀՈՒՐԴԻ)



ԻՆՏ 50 ԿՈՂ.

329.14  
Հ-24

Ք Ի Ց Լ Ի Ս  
Տպարան «ԷՊՕԽԱ»  
1917

JUN 2013

20.150

329  
6-89

329.14  
2-24

7004 10077

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

ՄԻՋԱԿԱՆԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ  
(ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ)



ՓԿՁ 20 110

ՏԻ ԿԷ

992 90

### ԵՐԿՐԻ ԽՍԵ ԹԻՒՐԲԱԿԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

— (ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՅ ՍԱՀՄ. ՌԱԿԿ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՂՐ. ԽՈՐՀՈՒՐԴԻ)

Համբերողական պատերազմի, Թիւրքահայաստանի մէկ մասի գրաւումին. ինչպէս նաև հայկական բնաջնջող ջարդերու և տեղահանութիւններու հետեւանքով, Հայ. Սահմ. Ռաւմ. Կուսակցութեան հին ծրագրի թէև երկրորդական՝ բայց մեծադոյն մասը իր գոյութեան իրաւունքը կորսնցուցած ըլլալով, կուսակցութեանս Հայաստանի Կեդր. Խորհուրդը, շրջանային պատգամաւորական ժողովի որոշման համաձայն, անհրաժեշտ համարեց ներկայ շրջաբերականով համառօտակի ուրուագծել կուսակցութեանս զլիւստոր սկզբունքները, ուղեցոյց ծառայելու համար ընկերներուն իրենց գործունէութեան մէջ. ինչպէս և հետաքրքրուողներուն որոշ գաղափար տալու ռամկավարութեան մէջ. ինչպէս և հետաքրքրուողներուն մասին, մանրամասնութիւնները Թողնելով կուսակցութեանս ազգայ ընդհանուր ժողովին, երբ զէնքի բազը վճած կը լինի բովանդակ աշխարհի հետ նաև Հայաստանի վիճակը, և մեզ հետաքրքրութիւն տուած ճշդելու այն շօշափելի ձևերը, որով մեր դաւանած սիդրունքները արտայայտութիւն գիտի գտնեն մեր հայրենիքին մէջ:

Հ. Ս. Ռ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶԺՈՒԹԻՒՆԸ  
ԵՒ ՆՊԱՏԱԿԸ

9603

Հ. Ս. Ռ. Կուսակցութիւնը կազմուած է օսմ. սահմանափակութեան վերանայնացումէն յետոյ, 1908 ին, նախկին Արմենիան և վերակազմուել Հնչակեան («Ազգ» եան հատուած) կուսակցութիւններու և այլ պաղափարակից տարրերու միութեամբ, նպատակ ունենալով օրինական միջոցներով ձեռք բերել Թիւրքահայաստանի համար ազգային լայն իրաւունքներ օսմ. պե-

առևթեան մէջ. բայց այժմ, երբ առձևական զազանային բարբարոսութիւնները եկան ազացուցանելու որ յիմարութիւն է թիւրք տիրապետութեան առկական ազգային բարգաւաճում կամ պարզ ազահով գոյութիւն սպասել, առկավարութիւնը կը պահէ իր նպատակի էական մասը—թիւրքահայութեան քաղաքական, տնտեսական, բարոյական վերականգնումը, առանց դային կապելու օսմ. պետութեան հետ:

**ԻՆՉ Է ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ**

Ռամկավարութիւնը (Ինքնակրատիա. démocratie) կը նշանակէ ժողովուրդի գերիշխանութիւնը: Մի քաղաքական սկզբունք է այդ, որու համաձայն՝ ժողովուրդի մը համար չկայ ուրիշ աւելի բարձր հեղինակութիւն՝ քան նոյն այդ ժողովուրդի կամքը: Այս սկզբունքովը չէ որ կառավարուած է աշխարհը ամեն տեղ և ամեն ժամանակ: Երկար դարերու ընթացքին ժողովուրդները կառավարուած են ազնուապետական և միապետական սխառեմով որ ամբողջ ժողովուրդը կենթարկէր մէկ կամ մի քանի անհատներու բացարձակ և անսահման տիրապետութեան: Միապետը կամ ազնուականը կը համարուէին Աստուծոյ ներկայացուցիչը երկրի վրայ, և անոնց հրամանները նուիրական և անաւարկելի էին բոլորի համար: Ժողովուրդի կամքը ոչ մի նշանակութիւն չունէր: Երկար դարեր ժողովուրդները կրեցին այդ մեծ ու փոքր բռնակալներու լուծը, մինչև որ հետզհետէ ուժեղացէմ և պահանջեցին որ ժողովուրդը ինքը լինի ինքզինքը կառավարողը և ոչ թէ ենթարկուի իրմէ անկախ մէկ կամ մի քանի անհատներու քմահաճոյքին: Երկարատե և ծանր կռուով, արիւնի գետերով, ժողովուրդները յաջողեցան իրենց բռնակալներէն զբաւել իշխանութիւնը, աւելի կամ նուազ լիակատար ձևով: Անկատար ձևը եղաւ սահմանադրական-միապետութիւնները, որոցմով իշխանութիւնը չի պատկանիր ամբողջութեամբ միապետին և ոչ ժողովուրդին, այլ բաժնուած է անոնց և իւրաքանչիւր կողմի իրաւունքներու և պարտականութիւններ սահմանը որոշուած է մի պետական պայմանագրութեամբ որ կը կոչուի Սահմանադրական Օրէնք: Իսկ աւելի լիակատար ձևը եղաւ հանրապետութիւնը, որով բոլորովին ջնջուեցաւ միապետի և

առհասարակ ժողովուրդէն չընարուած մարդոց իշխանութիւնը և ժողովուրդը ինքը դարձաւ իր միակ կառավարիչը: Ինքզինք կառավարելու համար ժողովուրդը ստեղծեց իր ազգային խորհրդարանը, բարլամէնթ, որ կազմուած է բոլոր քաղաքացիներէն ընարուած երեսփոխաններէ, և կը կազմէ ամենաբարձր հեղինակութիւնը բովանդակ ազգին մէջ, որ կուտայ բոլորի համար պարտադիր օրէնքներ ու որոշումներ և զանոնք գործադրել կուտայ իրմէ ընարուած և իրեն ենթարկուող մի նախարարական մարմնի մէջոցով: Այս կերպով վերցուեցաւ իշխանութեան գերբնական, աստուածային հանգամանքը և ժողովուրդները տէր դարձան իրենց ճակատագրին, ազատուեցան իրենց ստրկական դրութենէն, ճանչցուեցաւ բոլոր մարդոց հաւասարութիւնը օրէնքի առաջ և մարդիկ ազատ համարուեցան ընելու ինչ որ հաճելի էր իրենց, պայմանով միայն որ այդ արարքները չվնասէին ուրիշներու շահերուն կամ ազատութեան:

Մարդկութեան համար նոր դարազուլի էր սա, ազատութեան և ինքնիշխանութեան դարազուլի:

Ռամկավարութիւնը այդ սկզբունքի արտայայտութիւնն է: Նա կը պահանջէ որ որևիցէ երկրի մէջ, պետական ամենաբարձր իշխանութենէն սկսած մինչև ամենայնոքին գիւղական կամ թաղական իշխանութիւնը, ստանձնեն միայն ժողովուրդի քուէով ընարուածները. նա կը պահանջէ որ բոլոր չափահաս քաղաքացիներու քուէն լինի վերին հեղինակութիւնը հասարակական բոլոր խնդիրներու կարգադրութեան մէջ: Ռամկավարութեան քաղաքական իտէալն է բացարձակ հանրապետութիւն, իսկ սահմանադրական միապետութիւնը կընդունի իբրև անցողական և ժամանակաւոր երևոյթ:

**ԻՆՉ ԿԸ ՊԱՐՏԱԳՐԷ ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ**

Քանի դեռ ձեռք չէ բերուած ժողովուրդի գերիշխանութիւնը՝ ազգ. գերիշխան խորհրդարան, քանի դեռ չկայ ազատ արտայայտուելու և գործելու հնարաւորութիւն, ռամկավարութիւնը կընդունի յեղափոխական գործունէութիւնը, բռնի ոյժի կիրառումը պետական կազմը փոխելու համար, բայց երբ հաստատուած է ընդհանուր և ազատ բուէարկութիւն, երբ երկրին վերին հեղինակութիւնը կը կազմէ ազգ. խորհրդարանը և անոր

13545-17

առջև պատասխանատու նախարարութիւնը, աամկավարութիւնը, հետեւողական իր սկզբունքներուն, կը մերժէ որ և է յեղափոխական կամ բռնի գործողութիւն, որ պիտի նշանակէր փոքրամասնութեան տիրապետութիւնը մեծամասնութեան վրայ և բռնակալութեան հին սկզբունքի յարութիւն առնելը նոր ձևի տակ: Ռամկավարութիւնը կը պահանջէ որ պետութեան և հասարակութեան բոլոր գործերը, նախարարական իշխանութեանն սկը-սած մինչև քաղաքապետութիւնները, քաղաքներու, գիւղերու և թաղերու համայնական գործերը, ինչ ալ որ ըլլան, կառավար-ւին միայն ժողովուրդի ուղած ձևով և անոր ընտրած անձերով, իսկ ժողովրդի ջուհն շահելու համար՝ թոյլատրելի է միայն ա-զատ պրօպագանտը: Այդպէս նաև հանրային բոլոր հաստատու-թիւններու վերաբերմամբ այն ժողովուրդներուն, որ չունին սեպհական քաղաքական անկախութիւն, օրինակ՝ հայերուն: Բռնութիւնը, սպառնալիքը և ամէն կարգի արգելիչ միջոցներ, որոնց կողմէ ալ ըլլան և ինչ լաւ նպատակներ ալ վերադրեն ի-բննց, բացարձակ ոճիք են աամկավարութեան դէմ և ժողովուր-դը կը ամենին դէպի ստրկացում և հին բռնապետութիւնը, որմէ ազատուելու համար հարկ կ'լլայ վերանորոգել անցեալի մէջ թափուած դարերու հերոսական ճիգերը և արեան հեղեղները:

**ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱԶԱՏ ԳՐՕՊԱԿԱՆՏԻ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ Է**

Որպէսզի զի որ և է ժողովուրդի ինքնիշխանութիւնը արդի-նաւոր ըլլայ, պէտք է որ նա մտաւորապէս և բարոյապէս ի վի-ճակի ըլլայ իր խօսքն ըսելու իր կեանքի հետ կապ ունեցող բո-լոր խնդիրներու մասին: Այդ պատճառով անհրաժեշտ է որ ժո-ղովուրդի մէջ տարածուի պարտադրիչ կըթութիւն, որպէսզի ոչ ոք անգիտակցաբար չի տայ իր ջուհն: Անհրաժեշտ է անընդհատ մարդիկ ժողովուրդի միտքը, գապուսներն ու կամքը, որպէսզի նա կարողանայ օգտագործել իր ինքնիշխանութիւնը և ամուր պա-հել ուղարգացնել իր վայելած բարիքները: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջոցներ, որ ժողովուրդի բոլոր անհամները, և ոչ թէ միայն անոր մէկ մասը, կարողանան վայելել բնութեան բա-րիքները, իրենց աշխատանքի արդիւնքը: Իսկ այդ բոլորը կը պահանջեն ժամանակ, յարատև աշխատանք, ընդարձակ և բարդ

ուսումնասիրութիւններ, նիւթական և բարոյական ահագին զոհաբերութիւններ, մի մշտական վերելք դէպի կեանքի լաւա-գոյն ձևերը, որուն և նւիրուած են իսկական աամկավարական կուսակցութիւնները բոլոր երկիրներու մէջ:

**ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԲՆԱՇՐՁԱԿԱՆ (ԷՎՕԼՅՈՒՄՈ-ՆԻՍՏ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ Է**

Ռամկավարութիւնը, չընդունելով ազատ կարգերու մէջ բնու-նի յեղափոխական գործողութիւններ, կը թողնէ որ ժողովուրդի հետզհետէ զարգացող գիտակցութիւնը իր ազատ կամքովը ստեղծէ իրեն համար կեանքի աւելի լաւ ձևեր, համոզուած լի-նելով որ մարդկային ընկերութիւնը, ինչպէս բուսական և կեն-դանական աշխարհը, կը յառաջդիմէ զանազա բնաշրջումով: Ոս-տում չկայ պատմութեան մէջ, և ամէն յեղափոխութիւն կա-բունի արարք, որով փոքրամասնութիւնը կը յաջողի ձեռք բերել այս կամ այն կարգադրութիւն, հակառակ մեծամասնութեան կամքին, առաջ կը բերէ անբաղձալի ցնցումներ և անկարգու-թիւն ժողովուրդի մէջ, կը խանգարէ անոր յառաջդիմութեան բնականոն ընթացքը, առանց հասնելու իր փափաքած արդիւն-քին, որովհետև անխուսափելի հակադրեցութիւնը (սէքսիօն) կուգայ ոչնչացնել մէկ վարկեանի համար ձեռք բերուած աչդ յաջողութիւնը և վերստեղծել իրերու նախկին դրութիւնը:

Մարդկութիւնը կը յառաջդիմէ ոչ ատրճանակով և ոչ ոսւմբով: Գիտութիւն, գրականութիւն, ընտանիք, դպրոց, կրօն, ազատ ջուհարկութիւն, անտեսական գործունէութիւն, վերջա-պէս խաղաղ կուլտուրական յարատև աշխատանք, այդ ձանապար-հով է որ ժողովուրդները ձեռք կը բերեն յառաջդիմութիւն և բաղդաւորութիւն և ոչ թէ յանկարծական և բռնի միջոցներով, որոնց սիրահար են այնպիսի տարրեր և կուսակցութիւններ, որ բնզունակութիւն չունին նուիրուելու ծանր և համբերատար աշ-խատանքի, այլ կենթադրին երկնքի թագաւորութիւնը բերել երկրի վրայ մէկ հարուածով, ժողովրդական զանգուածներու՝ կամ անոնց մէկ մասի րոպէական բռնկումներով:

ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ Է

Ռամկավարութիւնը չէր կարող յեղափոխական չըլլալ, եթէ ազատութիւնը ապահովուած չլինէր ժողովուրդի համար: Ազատութիւնը ազատութեանը գոյութեան անհրաժեշտ պայմանն է, միայն ազատութեան մէջ հնարաւոր է ժողովուրդներու խաղաղ և արագ յառաջդիմութիւնը: Այդ պատճառով ալ ազատութիւնը իր սկզբունքներու հիմնաքարը դարձուցած է ազատութիւնը: Ազատութիւն խօսքի, մամուլի, ժողովներու, միութիւններու, գործադուլներու: Ազատութիւնը այնքան անհրաժեշտ է ժողովուրդներուն, ինչքան իրենց շնչած օդը: Սա այսօր անվիճելի ճշմարտութիւն կը համարուի բոլորի կողմէ, բայց յաճախ միայն թուղթի վրայ: Մենք հայերս գիտենք թէ ինչպէս մեր մէջ նոյն իսկ յեղափոխութեան և ազատութեան անուհով գործողները իրենց կարգին հանգիստացած են ազատութեան սպանիչներ, արգելելով հակաճառութիւններ, բռնի միջոցներու դիմելով ժողովուրդի և իրենց գաղափարական հակառակորդներու հանդէպ, նախատելով, սպառնալով, ծեծելով, սպաննելով, և այդ կերպով իրենց կամքը բռնի պարտադրելով ժողովուրդին: Ռամկավարութիւնը ժողովուրդի և ազատութեան հանդէպ ամենածանր ոճիւր կը համարի այդ կարգի բոլոր արարքները և իր բովանդակ միջոցներով կը կռուի բռնապետութեան այդ զրուսիւնի մնացորդներու դէմ:

Իբրև ազատութեան եւանդուն պաշտպան՝ ռամկավարութիւնը սովորութիւն է եղած կոչել նաև ազատական (լիպերալ) կուսակցութիւն:

ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԻԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ Է

Ռամկավարութիւնը իբրև քաղաքական միութիւն կընդունի բովանդակ ազգը և ոչ թէ անոր այս կամ այն դասակարգը, և իր ջանքերու առարկան կընէ այդ ազգի և ոչ թէ միայն անոր այս կամ այն դասակարգի շահը, ինչպէս որ մարդու մը ձեռքառուներու առարկան իր ամբողջ մարմինն է, և ոչ թէ անոր միայն այս կամ այն անդամը կամ գործարանը: Ազգին մէջ թէև

կան զանազան դասակարգեր, հողագործ, արհեստաւոր, վաճառական, բանուոր, մտաւորական և այլն, բայց այս բոլորը իրենց տեսակին, առանձնայատուկ շահերը կարող են ապահովել միմիայն այն ատեն, երբ բովանդակ ազգի, զայն բաղկացնող բոլոր տարրերու անհրաժեշտ շահերը ապահովուած են: Այդ դասակարգերը կարող են ներքնապէս մասնակի հակադիր շահեր և հակամարտութիւններ ունենալ իրարու հանդէպ, բայց ունին նաև ընդհանուր շահեր, որոնք անհրաժեշտ է պահպանել միացեալ ոյժերով, որոնց կորուստը կործանարար է բոլորի համար, ինչպէս որ նաև ընկղմումը կործանարար է բոլոր իր մէջ դրանուողներու համար, ինչքան ալ անոնք իրարու թշնամի եղած լինէին: Ռամկավարութիւնը հաւատարմ է իրենց մէջ ողջամիտ անդասակարգերն ալ կը պարունակեն իրենց նեղ եսէն վեր բարձրանալու հատներ, որ ընդունակ են իրենց նեղ եսէն վեր բարձրանալու և իրենց շահերը պատշաճեցնելու միւս դասակարգերու շահերուն, մասնաւոր շահի ետեւէն նկատելու բովանդակ ազգի շահը: Նա ամեն ջանք կը թափէ որ այդ գիտակցութիւնը գրաւէ հետզհետէ ժողովուրդի աւելի լայն խաւեր: Այդ գիտակցից տարրերու վրայ է որ կը յենուի ռամկավարութիւնը, նա հաւատարմ է մարդկային բանականութեան և ժողովրդական բոլոր տարրերու համերաշխ գործակցութեան վրայ:

Կան քաղաքական կուսակցութիւններ (ընկերավարականներ) որոնք իրենց գործունէութեան նպատակը կը դնեն միայն ժողովուրդի մէկ դասակարգը. բանուորութիւնը, և անոր մասնակի շահերէն դատ ուրիշ շահ չեն ուզեր ճանչնալ: Բայց այդպիսիներ անպատասխանատու քարոզիչներ են, որոնք քարոզի սխալ լինելը և անոր վտանգաւոր հետեւանքները անյայտնի չեն ըլլար միայն խաղաղ ժամանակները, երբ վտանգը ծածկուած է և մասնաւոր ուրիշ աւելի զօրեղ և կառավարութեան գլուխը գտնուող կուսակցութիւններու աշխատանքի շնորհիւ որոնք կը ղեկավարէին լայն ժողովրդական տեսակէտներով: Ընդհանուր երևոյթ է որ ամէն անգամ, երբ ընկերավարական անհատներ անցած են կառաքարական գործերու գլուխը, թողած են իրենց նեղ դասակարգային տեսակէտը և սկսած են աշխատիլ համաժողովրդական ծրագրով: Իրերու ընթացքը, կեանքի մօտիկ շփումը երևան հանած է իրենց նախկին տեսակէտի սխալ լինելը: Մարդիկ հարկադրուած են ընդունիլ որ անկարելի է ապահովել դասակարգերու շահը և

զանց աննել ազգը, ինչպէս անկարելի է զբաղուել միայն մէկ մասի ապահովութեամբը և նկատի չունենալ ամբողջը: Սոսկ դասակարգային շահերը նկատի ունեցող կուսակցութիւնները այն օգուտը միայն ունին, որ ուշագրութիւն դարձնել կուտան այդ դասակարգերու աննպաստ վիճակի վրայ և կտեղծեն անոր ի նըստակարգերու աննպաստ վիճակի վրայ և կտեղծեն անոր ի նըստակարգերու աննպաստ վիճակի վրայ և կտեղծեն անոր ի նըստակարգերու աննպաստ վիճակի վրայ:

**ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ Է**

Վերը ըսուածներէն յայտնի է ինքնին որ ուսակավարութիւնը ազգային է, այսինքն կը պաշտպանէ ազգի շահը իբրև մի հաւաքական միութեան շահ: Նա ազգային զգացումը կը համարի մի գրական և ստեղծագործող ազգակ մարդկային պատմութեան մէջ և զայն ջնջելու ձգտումը ապարդիւն և վնասակար: Բնութեան մէջ աւելորդ ոչինչ չկայ, հայրենիքի, ազգի սէրը, նոյնպէս, իրերի ներկայ գրութեան անխուսափելի մէկ արտայայտութիւնն է որ իր սեպհական դերն ունի կատարելու ընկերային յառաջդիմութեան մէջ:

Ազգայնականութիւնը չի նշանակեր ատելութիւն միւս ազգերու հանդէպ, ինչպէս ընտանիսիրութիւնը չհնթադրեր ատելութիւն գէպի ուրիշ ընտանիքները: Ազգերը մեծ ընտանիքներ են, և անոնց զաւակները իրենց առաջին պարտականութիւնը համարելու են աշխատելու նախ իրենց ընտանիքին համար և ապա միւսներու, որոնք ունին արդէն իրենց համար աշխատողներ: Աշխատելով իրենց ազգի համար՝ մարդիկ աշխատած կը լինին մարդկութեան համար: Չկայ մարդկութեան որ ե է մտտ որ չներկայանայ այս կամ այն ազգի ձևի տակ, և անհատը, մարդկութեան օգտակար լինելու համար պէտք է օգտակար լինի անհրաժեշտօրէն որ և է ազգի, իսկ անհատի համար գործու-

նէութեան ամենայրմար գեաինը իր ազգութիւնն է, որու լեզուն, բարբերը, հողերանութիւնը ծանօթ են իրեն, որու վրաս ազգելու համար նա ունի բազմաթիւ միջոցներ և յարմարութիւններ:

Յարձակողական ազգայնականութիւնը, շովինիզմը, ազգային սղջմութենէ շեղումն է, հիւանդոտ այլասերումն է: Ռոմակավարութեան նշանաբանն է՝ յարգանք բոլոր ազգերու ազգային իրաւունքներուն և ազատ տղերու եղբայրական դաշնակցութիւն:

**ՌԱՄԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ Ե ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ**

Իրամազլուխը և մեքենական խոշոր արդիւնաբերութիւնը՝ մանաւանդ վերջին դարու ընթացքին, առաջ բերին քաղաքակիրթ երկիրներու մէջ հարստութեան հսկայական աճումն, բայց այդ հարստութեան անհամաչափ բաշխումը դրամատէրերու և գործաւորներու մէջ՝ առաջիններուն տուաւ կեանքի ամէն տեսակ բարիքներու անլուր ճիւղութիւն, իսկ վերջիններուն, ապրուստի ամէն միջոցէ զրկուած ընչազուրկ (պրօլետար) գործաւորներուն, մի խեղճ և չարքաշ կեանք. և որովհետև մեքենայի հանդէս գալով՝ ժողովուրդի խիստ բազմաթիւ տարբեր զբոհուած էին իրենց փոքրիկ արհեստանոցներէն և ապրուստի միջոցներէն և գործաւոր դարձած դրամատիրութեան, ստեղծուեցաւ մի գործաւորական հարց որ քաղաքակիրթութեան մարդկութեան այժմեայ ընկերային ամենակենսական հարցն է: Ինչպէս վերացնել գործաւոր դասի թշուառութիւնը: Այդ հարցի օրինաւորութիւնը կընդունի ուսակավարութիւնը և ամեն ջանք կը թափէ անոր բաւարար լուծում ապրու իբրև առաջին և ամենատուր ժեղ զէնք, ուսակավարութիւնը կատարեալ ազատութիւն կուտայ բանուորին խօսելու, գրելու, միութիւն կազմելու, գործադուլ ընելու: Հողեպէս զարգանալով և միութիւններ կազմելով՝ բանուորները կը դառնան ոչ թէ այլևս դրամատէրերու ամեն քմահաճոյքին, ամեն անարդար կարգադրութեան հիւս սարուկներ, այլ մի մեծ ոյժ որ իր կարգին՝ գործադուլի սղաւանալիքով, կատարի դրամատէրին չափաւորել իր ախորժակները և կը կարգէ պէ դրամատէրին չափաւորել իր ախորժակները և կը կարգէ անկէ հետզհետէ նոր դիջումներ: Բանուորական միութիւնները այդ կերպով կը դառնան բանուորներու ձեռքին մի ուժեղ զէնք:

որով անոնք իրենց սեզական միջոցներով կարող կլան բաւարարել իրենց պահանջները: Բայց միայն բանուորներու սեզական աշխատութիւնը չի բուեր բանուորական հարցը արմատապէս լուծելու համար և անհրաժեշտ կը դառնայ կառավարութեան միջամտութիւնը: Ռամկավարութիւնը, մեկնելով համաժողովըրգական տեսակէտէ և խնդրի բանաւոր և հասունցած լինելը կամ ոչ մանրակերպ քննութեան եռթարկելով, ըստ այնմ կորոշէ կառավարութեան կողմէ ըլլալիք կարգադրութիւնը կամ յայտարարուելիք օրէնքը: Ռամկավարութիւնը չի ընդունիր որ ընկերային հարցը կարելի է գիւրութեամբ արմատապէս լուծել, այլ կը բարձրանայ միշտ բարելաւումէ բարելաւում, հաւատալով որ միայն այդ կերպով, միայն բնաշրջական աստիճանական վերելքով կարելի է յաղթել այն ենթակայական և աւարկայական արգելքներուն որ կը խափանեն ընկերային-տնտեսական խնդրի վերջնական և իտէալ լուծումը: Ռամկավարութիւնը դէմ է ընկերային հարցը լուծելու նպատակով գիմելու բռնութիւններու, կամ տալու յախուն որոշումներ, կատարելու յանկարծական օստումներ, ոչ թէ դէմ լինելով բանուորներու դրութեան անմիջական բարելաւումին, տնտեսական անհաւասարութեան մեծ հարցի արմատական լուծումին, այլ որովհետեւ հաւատացած է որ բուն իսկ բանուորութիւնը նման անխորհուրդ կարգադրութիւններէ ոչինչ չընկնէ զատ՝ մեծապէս պիտի վնասուի: Հասարակական կեանքը չափազանց բարդ և կնճուտ է. անոր որ և է մասի վրայ եղած հիւանդութիւնը զարմանելու համար՝ պէտք է իսկական բժշկի պէս քննել ամբողջ մարմինը, ուսումնասիրել հիւանդութեան ծագման պատճառները: Գիտնալ թէ ի՞նչ յարաբերութիւններ գոյութիւն ունին հիւանդ և առողջ մասերու մէջ, գիտնալ գործածուելիք զարմանի յտակութիւնները և անոր թէ, հիւանդ մասին և թէ, ամբողջ մարմնի վրայ ունենալիք ազդեցութիւնը և այլն:

Այս կերպ գիտական բարեխղճութեամբ կը մօտենայ ընկերային խնդրին և ամկավարութիւնը. նա չի կրնար, ինչպէս յաճախ խորհուրդ կուտան, կապուած զանազան ծայրայեղ կուսակցութիւններու անպատասխանատու շէֆեր և բանաւորական ազէա կամ թերուս խմբակցութիւններ, գոհացնել յայտնուած բոլոր պահանջները և կայացնել, յախուն որոշումներ, ինչպէս այդ օժիորութիւն է բոլոր ազէա և յանձնադաստան բժշկիներու: Այդ տեսակ չմտածուած քայլեր, կեանքի զարգացման անհամապատասխան կարգադրութիւններ, ծանր խառնաշփո-

թութիւն կստեղծեն ժողովուրդի հասարակական, տնտեսական կեանքի մէջ, երևան կուգան լայնախառն անպատասխանութիւններ որ աւաջուց անար էր նախատեսել, կակսի ընկերային-տնտեսական կազմալուծումը, որմէ կը տուժէ ամենէն առաջ ինքը բանուորութիւնը և անազին քնսներէ յետոյ հարկ կը լինի վերադառնալ նորէն նախկին դրութեան:

Ռամկավարութիւնը համամիտ է ընկերավարական կուսակցութիւններուն, ցորչով անոնք կը պահանջեն բանուորական պահանջներու աստիճանական բաւարարում, բայց դէմ է անոնց զուտ դատարարային նեղ տեսակէտէ բղխած մաքսիմալ պահանջներուն և չի ընդունիր ընկերային հարցի ապագայի նկատմամբ անոնց այժմէն կազմած ծրագիրը, որու համաձայն պիտի վերնայ մասնաւոր սեպհականութիւնը, արդիւնաբերութեան բոլոր միջոցները պիտի գրաւուին և անցնին կառավարութեան ձեռքը և կառավարութիւնն ինքը պիտի ստանձնէ արդիւնաբերական ձեռնարկներու և ապրանքներու կանոնաւոր արտադրութիւնն և բաշխումն հսկայական գործի բացարձակ տիրապետութիւնը: Իբրև բնաշրջական կուսակցութիւն, ամկավարութիւնը չի կրնար ընդունիլ ազազան մեր ըմհան ծրագիրներուն ենթարկելու կարելիութիւնը. նա աւելորդ կը համարի կազմել հեռաւոր ազագայի մասին որ և է ծրագիր, հաւատալով որ ապագան պիտի կազմուի այնպէս, ինչպէս որ կեանքը իր աստիճանական զարգացումովը կստեղծէ զայն և ոչ թէ մարդոց apriori կայացուցած որոշումներով:

ԴՐԱՄԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԻՖ Է

Ընկերավարական մամուլը և աժանագին հրատարակութիւնները ժողովուրդի թերուս մասի մէջ այն համոզումը գոյացուցած են թէ դրամատիրութիւնը (կապիտալիզմ), բուրժուական կարգերը մեծ, սոսկալի չարիք են: Բայց դա վերին աստիճանի սխալ և յետադիմական կարծիք է: Բովանդակ քաղաքակիրթ աշխարհի մէջ այսօր կը ախրեն բուրժուական կարգեր, բայց ոչ ոք չի համարձակիր ըսելու որ Եւրոպան և Ամերիկան աւելի գէշ դրութեան մէջ են, քան այն նախնական, տնտեսապէս յետամնաց երկրները, ուր այդ կարգերը շատ թոյլ են արտայայտուած, օրինակ՝ Ռուսիան, Պարսկաստան, Աֆղանիստան և այլն: Արեմտեան եր-

կիրենքու բովանդակ քաղաքակրթութիւնը, որ մեզ համար երազ կը թուի, - երկաթուղիներ, գործարաններ, մեքենաներ, համալսարաններ, հանրային դիտական և գրական հաստատութիւններ և այլն, բոլորը ստեղծուած են գրամատիրութեան ուժով և մեքենական արդիւնաբերութեան հաստատումով: Ուր որ գրամագլխի ոյժը կը մտնէ, հոն կը մտնեն նաև գիտութեան և բազմադարեան քաղաքակրթութեան բոլոր բարիքները, այդ գործօնը, իր սեպական շահին համար միայն ստեղծագործելով կը գործէ անգիտակցաբար բովանդակ հոտարակութեան համար և իր զարգացումովն իսկ կը հարկադրուի ծառայել պատմական յառաջդիմութեան: Անոր գէշ կողմերը յարատե չեն, անոնք-իրենց ձեռքովը կը փորեն իրենց սեպական գերեզմանը:

Ռամկավարութիւնը, ուրեմն, ոչ թէ կը կռուի ընդդէմական կարգերու հաստատման և զարգացման դէմ, այլ ամբողջ ոյժովը կը ձգտի նպաստել ատոր, իբրև բացարձակապէս միակ միջոցի, որ կարող է ստեղծել հասարակական հարստութիւն, յառաջ դիմութիւն և բազաւորութիւն:

**ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԻԻՐՔԱՆՅԱՍՏԱՆ**

Նկատի ունենալով մասնաւորապէս Թիւրքահայաստանի մինչ այժմեան նախապետական-աւատական կարգերը և վերջին բնաջնջող շարքերու և քանդումներու հետեանք եղող համատարած ամայութիւնն ու նիւթական ստեղծագործութիւններու բացարձակ ոչնչացումը, ամկավարութիւնը բոլորովին անտեղի, յետադիմական և կործանարար կը գտնէ որ և է դասակարգային կռիւ, ընկերվարական պրօպագանդա կամ հակառակութիւն դրամատիրութեան դէմ: Կործանարար կը գտնէ Թիւրքահայութեան զանազան խաւերու մէջ արուեստական կերպով բացուող պառակտումներն և ընդհակառակն՝ ամեն միջոցներով կը ձգտի իրականացնել հայ գործօն ոյժերու ընդհանուր միութիւնը մի ազգային, համաժողովրդական մեծ կուսակցութեան մէջ, համոզուած լինելով որ միայն այդ կերպով կարելի կըլայ հայկեանքէն անհետացնել գաղափարազուրկ և շատող Թալֆայականութիւնը, որ անցեալին մէջ բաժան բաժան ըրաւ մեր ոյժերը գործի և նենգամիտ Թիւրքմիտի հանդէպ և այժմ, հայ կեանքի ամենայնուսահատական վայրկեանին, կապառնայ միևնոյն եղանակո-

վը վատնել մեր երիտասարդութեան ոյժերը և թոյ տալ որ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով իր դարաւոր հայրենի հողը լրող հայը, չունենալով անհրաժեշտ միութիւնն ու կորովը, ընկճուի զինք շրջապատող աննպաստա պայմաններու յամառ ճնշումէն և անհետանայ ընդմիջտ աշխարհի երեսէն, ուր ուժեղներու և կեանքին յարմարողներու համար միայն տեղ կայ:

Հ. Ս. Ռ. Կուսակցութիւնը համոզուած է թէ անկարելի է մէկ կողմէ քարոզել «դասակարգային անհաշտ պայքար» և միւս կողմէ համախմբել հայ ժողովուրդի բոլոր ասորները միևնոյնապէս աւարկութիւնը՝ թէ առաջինը ռուսահայութեան համար է, իսկ երկրորդը Թիւրքահայութեան. համոզուած լինելով որ միևնոյն կուսակցութիւնը չի կրնար ունենալ երկու իրարու հակառակ ուղղութիւն, և որ այդ կուսակցութեան ռուսահայ բաժնի կողմէ մղուած անհաշտ դասակարգային պայքարը անկարելի է որ անհաշտ արամադրութիւն և թունաւոր պառակտումներ չստեղծէ Թիւրքահայութեան մէջ միևնոյն կուսակցութեան Թիւրքահայ բաժնի միջոցով և զբոյի չը վերածէ այն ազգային միացեալ գործունէութիւնը որ Թիւրքահայութեան համար մահու և կենաց խնդիր է:

Հ. Ս. Ռամկավարութիւնը կոչ կուզէ բոլոր Թիւրքահայութեան, անխտիր—սուսցիչ, քահանայ, քաղաքացի, դիւղացի, գործաւոր, հարուստ, աղքատ, բոլորուիլ Թիւրքահայութեան ֆիզիքական և հոգեկան պահպանման, Թիւրքահայ ազատագրութեան, աւերուած հայրենիքի վերաբնակելիութեան և վերաշինութեան գործի շուրջ, Հ. Սահմ. Ռամկ. Կուսակցութեան զբողակին տակ, որ համաժողովրդական է, որ միութեան և գործի նշանաբան է և ոչ թէ կեղծ—դասակարգային սպանիչ տախտակութիւններու և քայքայման.

Կուսակցական սնափառութիւնը չէ որ մեզ այս յայտաբարութիւնն ընել կուտայ, այլ ազգային միութիւն, կեղբոնական—համաժողովրդական կուռ կազմակերպութիւն մը ունենալու հրամայողական կարիքը. և սրովհետև հայ ընկերվարական կուսակցութիւնները չեն համաձայնիր—գէթ մինչև այսօր—թող սկի իրենց հեռաւոր նշանաբանները և մօտաւոր նպատակին համար կազմել մի համազգային կուռ միութիւն, մինք ուրիշ ձամբայ չենք ահսներ, բայց եթէ հրապարակ զալ առանձին, մեր

սեպհական կուսակցութեան անունով և յորդորել թիւրքահայ ցիրուցան հատուածներուն միանալ այդ կազմակերպութեան շուրջը, ոյժ աւալ անոր, ամբաստանել անոր շարքերը և ձեռնարկ այդ կերպով այն ուժեղ կեդրոնական կուսակցութիւնը, որու չգոյութիւնը, վերջին քառորդ դարու մեր ազատագրական ձգտումներու շրջանին, հայ ժողովուրդը մատնեց անպատասխանատու, ծայրույեղ ատրքերու կործանիչ գործունէութեան: Այժմ հայ ժողովուրդի ինքնապահպանման բնաղբը պէտք է խօսի: Հայ. Ս. Ռամկավար կուսակցութիւնը ունեցեր է ցարդ ոչ մեծաթիւ հետևորդներ. նիւթական և բարոյական միջոցներու պակաս կղզայ նա, բայց այդ պարագան չը պէտք է յուսահատութեան մասնէ մեզ. մենք պէտք է խորհինք ոչ թէ այն մասին թէ ինչ ենք, այլ թէ ինչ պէտք է ըլլանք: Մենք և թիւրքահայ ժողովուրդի հսկայ մեծամասնութիւնը, որ կողմակից ենք համազգային միութեան, որ դէմ ենք դասակարգային անժամանակ և անիմաստ պառակտումներու, իրաւունք չունինք անդործ նստելու մեր ուժերու և յարմարութիւններու անբաւականութիւնը նկատի ունենալով: Որ և է ժողովուրդ իր ոյժերը իր մէջէն քաղելու է. ինչ նիւթական-բարոյական դիրքի վրայ ալ որ գտնուի: Թիւրքահայութեան այն մասն ալ, որ անձկութեամբ գործունէութեան նոր ուղիներ փնտռելու ետևէ է, առանց վարանելու համախմբելու է իր ոյժերը կազմակերպութեան մը մէջ: Այդ համախմբումն է որ պիտի ստեղծէ հարկաւոր եղած հեղինակութիւնը և հնարաւորութիւն աայ գործնական մանրամասնութիւններով զարգացնելու այն ուղղութիւնը, որու գլխաւոր ձևերը պարզեցինք ներկայ շրջաբերականովը:

Քիչ շատ ուշադիր դիտողութիւն մեր կեանքի վերջին տարիներու իրադարձութիւններու վրայ՝ պիտի համոզէ իւրաքանչիւր հայը որ կազմակերպութիւնը միակ ամուր ձևն է հասարակական գործունէութեան: Անկազմակերպ մասսայի բոլոր գեղոհութիւնները, ալիկոծումները, բողոքները, քամիի պէս կանցնին և կեանքը կը ձայ հոն ուր որ էր: Թիւրքահայութիւնը պէտք է զգայ այժմ այդ ձևի գործունէութեան անօգուտութիւնը, պէտք է համոզուի որ առանց կազմակերպութեան նա ոչինչ կարժէ, թէև հարիւր հազարներ ունենայ: Պէտք է գիտնայ թէ միայն կազմակերպուած գործունէութիւնն է որ հետք կը թողնէ կեանքի մեկ և կը յարատեւէ տարիներու ընթացքին մէջ, դասնալով կո-

վուրդներու յառաջդիմութեան մեծագոյն ազդակներէն մէկը:

Թիւրքահայ ժողովուրդը, եթէ կուզէ վերջապէս պահպանիլ մի կազմակերպութեան, եթէ կորոշէ հեռակի մի նշանաբանի, ուրիշ նշանաբան չի կրնար ունենայ, բացի Հայ Սահմ. Ռամկավարական կուսակցութեան նշանաբանէն: Անոր համաժողովրդական սկզբունքն է միայն որ կը համապատասխանէ հայ ժողովուրդի բնաղբարը զգացած, բայց ցարդ գոհացում չգտած հայ ազգային միութեան պահանջին:

Թիֆլիս, 1917 օգոստոս, Հայ Սահմ. Ռամկավար կուսակցութեան հաստատութիւնը, Խորհուրդ:

*Յայտարարութիւն*

Կազմակերպական կամ այլ խնդիրներու համար գիտել Հայ Սահմ. Ռամկ. կուսակցութեան Հայաստանի Կենտր. Խորհրդին «Վան-Տոսպ»-ի հասցէով:



ու  
մա  
բա

Handwritten text at the top edge of the page, likely bleed-through from the reverse side.

Handwritten text, possibly a date or reference number.

Handwritten text, possibly a name or title.

Handwritten text, possibly a date or reference number.

Handwritten text, possibly a name or title.

Handwritten text, possibly a date or reference number.

Handwritten text, possibly a name or title.

Handwritten text, possibly a name or title.

Handwritten text, possibly a date or reference number.

Handwritten text, possibly a name or title.

Handwritten text, possibly a name or title.

Handwritten text, possibly a date or reference number.

Handwritten text, possibly a name or title.

Vertical handwritten text on the left edge of the page.

Handwritten text, possibly a date or reference number.

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ՎԱՆ-ՏՈՍՊ“

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱԶԱՌԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

ԵՐՐԱՐԴ ՏԱՐԻ (1918 յունուար 1—գեկտմբեր 31)


Բաժանորդագրության պայմանները

Ռուսաստանի համար տարեկան 20 ռուբ. 6 ամիս 12 ռ.

Արտասահմանի » » 30 » » » 16 »

Հասցե՝ Тифлисъ, Головинск. пр. № 41. Ред. ампія армянс  
журнала «ВАН-ТОСПЪ». կամ Rédaction du journal ar  
mien «VAN-TOSP» Golovinski pr. № 41. Tiflis.

Վ. ՆՈ 193  
10ր. 4



## „ԱԶԳ“

Օ Ր Ա Թ Ե Ր Թ (ՓՍ. ՏԱՐԻ)

Չաղտոնարկերը Հայ Ս. Ռամբուլտի Կոնսակցության Ամերիկյ  
դրճանակին

Բաժանորդագրութիւն՝ արտասահմանի համար տարեկան 20  
Հասցեն՝ «AZK» publishing company, 789 Washington stre  
Boston Mass. U. S. A.




## „ԱՐԵՎ“

ԱԶԳՈՑԻՆ ՇԱՀԵՐՈՒ ՅՐԿԱՆ (Գ. ՏԱՐԻ)

Կց նրատարակուի շաբաթը երեք անգամ

Բաժնեգիրը՝ արտասահմանի համար տարեկան 30 ֆրանկ  
Հասցեն՝ Journal «AREV» B. P. № 600, Alexandrie (Egy)



«Ազգային գրադարան»  
  
NL0199570

